Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ ***http://www.armin.am***

էլ. փոստ՝ ***info@armin.am***

Անհուն սիրո զգացումով այս
գիրքը նվիրում եմ մորս՝
Արև Գրիգորի Բաղդասարյանի
լուսավոր հիշատակին

ԿԱՐԵՆ ԱՎԱԳՅԱՆ

ԱՅՍՊԵՍ ԷՐ ԾԱԳՈՒՄ ԱՐԵՎԸ...

ԵՐԵՎԱՆ
2013

Կարեն Ավագյան

Կարեն Ավագյանի այս գիրքը պատմում է Հայաստանի ժողովրդական արտիստուհի, աշխարհի ժողովուրդների երգերի ու պարերի անզուգական կատարող Արև Բաղդասարյանի կյանքի և ստեղծագործության մասին: Լայն շրջանակներ ընդգրկող աղբյուրների հիման վրա գրքում վերարտադրվում է ազգային տաղանդաշատ արտիստուհու պայծառ կերպարը, որ ավելի քան 50 տարի իր արևային արվեստով գերել է բազմաթիվ ունկնդիրների ուշադրությունը ինչպես մեր հանրապետությունում, այնպես էլ նրա սահմաններից դուրս, այնպես էլ աշխարհի ամենատարբեր երկրներում:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ահա արդեն 90 տարի է անցել Հայաստանի ժողովրդական արտիստուհի Արև Բաղդասարյանի ծննդյան օրից, իսկ նրա մասին հիշողությունը դեռ ապրում է: Եվ նրա արվեստը մինչ օրս չի խամրել, նրա կրակը դեռ հուրհրում է:

Գրող Ալեքսանդր Արաքսմանյանը տարիներ ի վեր ուշադիր հետևել է Արև Բաղդասարյանի ստեղծագործությանը, խորհել դրա շուրջ, ձգտելով ընկալել դրա բնույթը, գտնել անհերքելի հմայքի, համընդհանուր ճանաչման և չընդմիջվող հաջողության գաղտնիքը: Վերլուծելով դերասանուհու արվեստը, նա եզրակացրեց, որ «Արև Բաղդասարյանի արվեստի ակունքը նրա հոգեկան աշխարհն է, ինքնադրսևորման անընդմեջ ձգտումը, որը բնորոշ է միայն խոշոր արվեստագետներին, իսկ էստրադայի ասպարեզում դիտվում է եզակի դեպքերում: Արև Բաղդասարյանն եզակի երևույթ է: Նրա ցայտուն, խիստ ինքնատիպ տաղանդը ինքնամոռաց աշխատանքի և իր սիրած արվեստին ֆանատիկ նվիրվածության հետ զուգակցված, արժանի է այն բանին, որ նրա մասին պատմվի ժողովրդի լայն զանգվածներին և ամենից առաջ երիտասարդությանը»:

Հարկ է նշել այն ժանրը, որի անթոշնելի ներկայացուցիչը Հայաստանում երկար տարիներ եղել և մնում էր Արև Բաղդասարյանը, հաճախ կատարում էր այն նույն գործը, ինչը որ երգի պարի մի ամբողջ անսամբլ: Այդ ժանրը առանձնանում էր իր թատերայնությամբ, բազմակերպարայնությամբ, երաժշտականությամբ և ընկալվելու մատչելիությամբ: Եվ այս առանձնահատկությունն այնպայմանորեն մեծ ազդեցություն էր գործում, քանի որ հանդիսատեսը հնարավորություն ուներ ուշադրությունը կենտրոնացնելու միայն մեկ կատարողի վրա և որսալ դերակատարման բոլոր նրբերանգները: Վերջապես, այս ժանրը խորապես համամարդկային ուղղվածություն ուներ, քանի որ ջերմ ու մտերիմ զգացմունքներ էր առաջացնում հեռավոր և անծանոթ ժողովուրդների հանդեպ:

Այսօր էլ Հայաստանում շատ քիչ մարդկանց կարելի է հանդիպել, ովքեր ծանոթ չլինեն Արև Բաղդասարյանի արվեստին: Նրան միշտ հրճվանքով և բաց սրտով են դիմավորել: Ամենուրեք նա շատ բարեկամներ ուներ, առավել շատ՝ իր արվեստի երկրպագուներ, ինչպես մեր հանրապետությունում, այնպես էլ նրա սահմաններից դուրս:

Արտիստուհու կատարողական բարձր վարպետությունը հաճախ վեճերի առիթ էր ստեղծում նրա ազգային պատկանելության շուրջ: Որտեղ էլ ելույթ ունենար, այնտեղ նրան համարում էին յուրային:

Հայաստանի ժողովրդական արտիստուհու ելույթն ազդարարող ազդագիրը միշտ էլ ուշադրություն է գրավել: Ամեն անգամ նա ստեղծագործական բարձր տրամադրությամբ էր շտապում իր համերգներին, հաղթահարելով մեծ տարածություններ, հաճախ դժվարին ճանապարհներով, ցրտին ու տապին: Քիչ չէին դեպքերը, երբ Արևը մեկ ամսվա ընթացքում ավելի շատ համերգներ էր տալիս, քան որոշված էր իր դիրքի արտիստների համար: Դուք երբեք չէիք տեսնի, որ նա իր համերգներին գնար չկամությամբ կամ դժգոհությամբ: Որտեղ էլ որ կայանալու լիներ համերգը՝ Երևանում թե մայրաքաղաքից հարյուրավոր կիլոմետր հեռու վայրերում, Արևը մեկնում էր մեծ պատրաստակամությամբ, ոգևորված այն հնարավորությունով, որ իրեն ընձեռնվում էր մարդկանց ծառայելու համար: Դահլիճը, ժողովուրդը նրա ներշնչման աղբյուրներն էին:

Թվում էր, թե ինքն արդեն կարող էր փառքի դափնիների վրա հանգչել և այդ իրավունքը նվաճել էր: Այնինչ միշտ սթափ էր ու ձգված, իր ձևն ու վիճակը պահպանած՝ կատարելագործվելու պատրաստ, հեռանկարներին հավատով սպասող:

Արևի համար տոն ու զվարճանք գոյություն չուներ, գործի մեջ միշտ մոլեռանդ, միշտ արվեստի շահերով ապրող: Նա սիրում էր իր գործը և նվիրված էր դրան անսահմանորեն: Հարյուր անգամ փորձած ու փորձարկած երգերն ու պարերը նա վերափոխում էր նորից, դրանց մեջ հաճախ նոր նրբերանգներ հայտնաբերելով:

Աշխատանքի մեջ խստապահանջ էր թե իր, թե գործընկերների հանդեպ: Այնինչ կյանքում, կենցաղում նա հոգատար մայր էր, հավատարիմ բարեկամ, դիմացինի հոգսերը կիսելու պատրաստակամ:

Թեմը նրա կյանքն էր, նրա տարերքը, որ խինդ ու հրճվանք էր պատճառում ոչ միայն իրեն, այլ նաև իր երկրպագուներին: Ավարտելով հերթական ելույթը, նա բեմից հեռանում էր հանդիսականների բուռն ծափողջույնների ուղեկցությամբ:

Արցախ աշխարհը նշանավոր մարդիկ շատ է տվել, և նրանց շարքում իր պատվավոր տեղն ունի Արև Բաղդասարյանը:

Արցախն Արևի համար սրբություն էր: Նա միշտ հպարտանում էր իր՝ շուշեցու ծագումով և խոսում էր Ղարաբաղի անաղարտ բարբառով: Նա կարող էր ժամերով պատմել արցախյան կենցաղային պատմություններ և կատակ զրույցներ: Արցախն իր հայրենիքը կոչելով, հաճախ բեմից, երգի միջոցով, նա այդ բանն անում էր այնպիսի խանդավառությամբ, վեհահունչ ձայներանգով, այնպիսի հիացմունքով, որ ասես հենց նույն պահին կտարածի ձեռքերը և քո աչքի առաջ կսավառնի դեպի հայրենի եզերքը: Եվ իսկապես, ղարաբաղցիների համար ծանր ժամանակներին նա միշտ առանձնահատուկ սիրով ու հոգու թրթիռով էր գնում Արցախ, հյուրասեր ու հերոսական հայրենակիցների մոտ՝ սատար կանգնելու նրանց իր արևային արվեստով: Ուստի էլ՝ պատահական չէ, որ ղարաբաղցիները իրենց անվանի հայրենակցուհու մասին երգ են հյուսել.

Մեր սարերի զարդն ես,
Քո անունն Արև,
Ղարաբաղի վարդն ես,
Քեզ հազար բարև:

Բեմական գործունեության տարիների ընթացքում Արև Բաղդասարյանը կատարել է տարբեր ժողովուրդների տասնյակ պարեր ու երգեր, որոնցից յուրաքանչյուրն առանձնանում էր իր յուրահատկությամբ և ներքին ջերմությամբ: Նրա համերգային ծրագիրը ծառայում էր նախ և առաջ ժողովուրդների բարեկամության ամրապնդման գործին: Ամեն մի համերգային շրջագայությունից հետո (լիներ մեր հանրապետությունում, թե նրա սահմաններից դուրս) ծնվում էր համերգային մի նոր համար, որը միշտ զարմացնում էր կերպարի ճշմարտացիությամբ և արտահայտչականությամբ: Նրա խաղացանկը ներառում էր ավելի քան 70 երգ ու պար, որոնցից գրեթե՝ կեսը հայկական: Նրա ստեղծագործության պակը կազմում էին ղարաբաղյան երգերն ու պարերը և դրանց թվում՝ անկրկնելի «Նախշուն բաջին», որի հեղինակը հենց ինքն էր՝ անզուգական արտիստուհին: Արև Բաղդասարյանի երգերից շատերը հաստատապես մտան մեր կենցաղի մեջ և արժանապես դարձան մեր ժողովրդի սեփականությունը:

Դավիթ Ղազարյան
Հայաստանի երաժշտական ընկերության նախագահ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր

ԿՅԱՆՔԸ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Արցախ, լեռնային գետերի, կարկաչուն, սառնորակ աղբյուրների, կուսական անտառների ու թթաստանների երկիր: Արցախ, Հայաստանի ժողովրդական արտիստուհի, աշխարհի ժողովուրդների երգերի ու պարերի անզուգական կատարող Արև Բաղդասարյանի ծննդավայր:

Ծնվել է 1913 թվականի ապրիլի 2-ին Շուշի քաղաքում:

Վարպետ Գրիգորը (այսպես էին կոչում Արևի հորը) հմուտ փայտ փորագրող էր: Հետագայում վարպետ կոչման արժանացավ նաև դուստրը՝ Արև Բաղդասարյանը, դառնալով իր գործի հիրավի անկրկնելի վարպետը:

Սիրանույշ Խաչատուրի Բաղդասարյան (Արուչա)՝ Արևի մայրը



Գրիգոր Պողոսի Բաղդասարյան՝ Արևի Հայրը

Մայրը՝ Սիրանույշ բաջին, ասում էր. *«Նորածին աղջիկս այնքան շիկահեր ու սպիտակամաշկ էր, որ թվաց, թե շրջապատում ամեն ինչ արևի պես պայծառացավ, այդ պատճառով էլ անունը կնքեցինք Արև»*:

Դեռևս մանկուց ի հայտ եկած սերը դեպի բեմը և բնության տրված շռայլ շնորհներն Արև Բաղդասարյանին մղում են ինքնագործունեության ասպարեզ: Եվ ահա Դոնի Ռոստովում կայացած օլիմպիադաներից մեկում նա իբրև պարուհի նվաճում է առաջին տեղը: Դա 1937 թվականն էր: Հենց այդ ժամանակվանից էլ Արևի առջև բացվում է արվեստի անկրկնելի աշխարհը, որը և կանխանշում է նրա հետագա ճակատագիրը:

Արևը՝ գեղարվեստական ինքնագործունեության խմբի անդամ (1929թ.)

Արև Բաղդասարյան (1933թ.)

1937թվականին Արևն ավարտում է Բաքվի տնտեսագիտական ինստիտուտը: Այն ժամանակ ոչ մեկի մտքով չէր էլ անցնի, որ այդ սիրունատես շուշեցի աղջիկը շուտով դառնալու է նշանավոր արտիստուհի: Այսօր արդեն անհեթեթություն է նույնիսկ մտածելը, թե Արև Բաղդասարյանը երբևէ պատրաստվում էր տնտեսագետ դառնալ:

Բախտը ժպտաց Արևին: Այդ նույն թվականին նա, որ ուշադրություն էր գրավում իր ծաղկուն գեղեցկությամբ և բնատուր ունակությունների հարստությամբ, ընդունվում է Ադրբեջանի ժողովրդական պարի անսամբլ և դառնում նրա մենակատարուհին: Սա առաջին արհեստավարժ կոլեկտիվն էր նրա համար: Մնաք բարով, թվեր ու հաշվարկներ, վերջնահաշիվներ ու տնտեսագիտական այլևայլ հոգսեր: Արևի փոքրիկ նավը դուրս է գալիս մեծ նավարկության:

1938թվականին պարի անսամբլի կազմում Արևը մասնակցում է Մոսկվայում անցկացվող ադրբեջանական արվեստի տասնօրյակին: Այդ տարիներին նրա արվեստը բարձր գնահատողներից մեկը Ավետիք Իսահակյանն էր, ով Մոսկվայում տեսնելով երիտասարդ պարուհու ելույթը և իմանալով, որ հայուհի է, ծանոթանում է նրա հետ և համառորեն խորհուրդ տալիս տեղափոխվել Հայաստան: Հետագայում մեծ բանաստեղծը եղավ նրա համերգների մշտական այցելուն:

Արև Բաղդասարյան Հայֆիլարմոնիայի մենակատարուհի (1942թ.)

1942 թվականից Արևը դառնում է Հայֆիլարմոնիայի մենակատար, և նրա համար ստեղծված փոքրիկ երաժշտախումբը սկսում է արագորեն ճանաչում նվաճել:

Այսպես հայոց թատերաերաժշտական արվեստի երկնակամարում ծագում է նոր լուսատու՝ Արև Բաղդասարյան անունով: Հետագայում ժողովուրդը քնքշորեն նրան կոչում է «մեր Արևը», ակնարկելով սիրված արտիստուհու և անմար լուսատուի անունների նույնությունը: Սա սիրո և ճանաչման արտահայտությունն է նրա բնատուր բեմական ունակությունների, հմայքի և աներևակայելի աշխատասիրության հանդեպ:

Արև Բաղդասարյանի ստեղծագործական տարերգության մեջ կա առանձնակի մի էջ՝ կապված Հայրենական մեծ պատերազմի տարիների նրա գործունեության հետ:

1944թվականի փետրվարին նա իր անսամբլի հետ կրկին մեկնում է ռազմաճակատ և ամբողջ մեկ ամիս ելույթներ ունենում Կերչում, համերգներով հանդես գալիս 89 - րդ հայկական Թամանյան դիվիզիայի մարտիկների համար:

89 - րդ հայկական Թամանյան դիվիզիայի հրամանատար Նվեր Սաֆարյանն իր հուշերում գրել է. *«Հիշում եմ Կերչի համար մղված մարտերի*

Արև Բաղդասարյանը (նստած է կենտրոնում) Կերչի ռազմաճակատում. նրա աջ կողմում՝ 89 - րդ հայկական Թումանյան դիվիզիայի հրամանատար, գեներալ մայոր Նվեր Սաֆարյանը (1944թ.)

ժամանակ մեզ այցելեցին Հայաստանի մի խումբ արվեստագետներ՝ ժողովրդական երգերի և պարերի հմուտ կատարող, ներկայումս Հայաստանի ժողովրդական արտիստուհի Արև Բաղդասարյանի գլխավորությամբ: Պետք էր տեսնել, թե ինչպիսի խանդավառություն առաջացրեց այդ լուրը»:

Ռազմաճակատային թերթը գրել է. «Ամբողջ դիվիզիան սիրեց Արև Բաղդասարյանին»: Մարտիկները համերգից հետո անմիջապես գնում էին մարտի, իրենց հետ տանելով նրա երգերի հմայքն ու ոգևորությունը: Մի երգ կար, որը Արև Բաղդասարյանը կրկնում էր համերգից համերգ: Դա Արտեմի Այվազյանի այն օրերին շատ հայտնի «Կովկասյան ողջույն» երգն էր, որի կատարմանը հաճախ ձայնակցում էին մեր մարտիկները:

Երգչուհին այս երգը կատարում էր այնպիսի ոգեշնչմամբ, հուզական այնպիսի շիկացմամբ էր առաջ տանում մեղեդին առաջինից մինչև վերջին տակտը, որ արտակարգ ոգևորություն էր համակում ունկնդիրներին: Այս երգը ինչպես նուրբ կամերտոն դիվիզիայի մարտիկներին տրամադրում, մղում էր նոր սխրանքների:

Արև Բաղդասարյանի ամուսինը՝ Կարո Ավագյանը իր մոր հետ (1946թ.)

Բանաստեղծ Արշալույս Սարոյանը, որն այն ժամանակ ծառայում էր ռազմաճակատում, Արև Բաղդասարյանի ելույթների տպավորության տակ նույնիսկ բանաստեղծություն է ձոնում նրան:

Նվեր Սաֆարյանը համերգների ավարտի կապակցությամբ Հայաստանի կառավարությանը զեկուցեց այսպես. «Արտիստների ամբողջ խումբը գործում էր հրետակոծության և հակառակորդի ավիացիայի գործողության պայմաններում»:

Արտիստները հայրենիք մեկնելուց հետո, երկու օր անց հայկական դիվիզիան ազատագրեց Կերչ քաղաքը: Այդ առթիվ ելույթ ունենալով «Կրասնի վոյին» թերթում, դիվիզիայի հրամանատար Նվեր Սաֆարյանը նշում է. «Ճակատամարտը մենք շահեցինք: Կերչն ազատագրվեց: Ես չեմ ուզում պնդել, որ դրանում «մեղավոր» էին մեր հայրենակից արվեստագետները, բայց որ նրանց ելույթը խիստ ժամանակին էր և մեծապես նպաստեց ռազմիկների մարտական տրամադրության բարձրացմանը, կասկածից վեր է: Այսպես արվեստը ռազմաճակատում օգնեց հաղթելուն»:

Համերգների կազմակերպման հոգսերը դրված էին մայոր Կարո Ավագյանի վրա: Նա ուշադրությամբ հետևում էր, որպեսզի արտիստների համար ստեղծվեին բոլոր անհրաժեշտ հնարավոր պայմանները: Նեղուցով անցնող ծովանցի հենց ափեզրին հանպատրաստից սարքվեց բեմը, իսկ բեմի լուսավորությունը իրականացնում էին իրենք՝ մարտիկներն ավտոմեքենաների ցոլարձակներով և գրպանի լապտերիկներով: Երբ Արև Բաղդասարյանը տեսնում էր այս ամենը, խորապես զգում էր, թե ինքը ինչքան անհրաժեշտ է այդ մարդկանց համար:

Կարո Ավագյանն այդ օրերին Արևին պատմում էր, որ պատերազմից առաջ ինքը ավարտել է Բաթումի թատերական ստուդիան և տարիներ շարունակ խաղացել այդ քաղաքի դրամատիկական թատրոնում: Արևը իսկույն հավատ է տածում այդ մարտական սպայի նկատմամբ: Հավանաբար արդեն այն ժամանակ բարետես այս սպայի մեջ տեսել էր մի մարդու, ում հետ կարելի էր կապել իր կյանքը: 1946թ. ճակատագիրը նրան նորից հանդիպեցրեց Կարոյին: Եվ նրանք շուտով ամուսնացան:

Հայրենական Մեծ պատերազմը պսակվեց խորհրդային ժողովրդի փայլուն հաղթանակով: Արև Բաղդասարյանն անցավ խաղաղ ստեղծագործական աշխատանքի, համերգից համերգ թարմացնելով և հարստացնելով իր խաղացանկը:

1948 թվականին Արևն արդեն ինքն է ստեղծում ժողգործիքների նոր անսամբլ, որի հետ ելույթներ էր ունենում ընդհուպ մինչև իր կյանքի վերջին օրերը: Ստեղծման պահից այդ անսամբլը ունկնդիրներին գրավում է կատարողական բարձր մակարդակով, խաղացանկի բազմազանությամբ և մենահամարների յուրօրինակ, վարպետ կատարումներով:

Գեղագիտական նուրբ ճաշակը, բեմական փորձառության հետ զարգացող բնատուր արտիստիզմը պահանջում էին ստեղծել բարձրարվեստ ամբողջական ծրագիր:

Առաջին այդպիսի ծրագիր ստեղծվեց պատերազմից հետո, 1948թ. երգարվեստի վարպետ Էմմա Ծատուրյանի ղեկավարությամբ:

Նրա անդրանիկ պրոֆեսիոնալ համերգը 1948 թվականին անցավ մեծ հաջողությամբ. այն բոլորովին նոր որակ էր, և շատերը նշեցին նրա ստեղծագործական կյանքում տեղի ունեցած դրական փոփոխությունը:

Հայկական երգ՝ «Աշուղ եմ»

«Ապարանա դայդեն» մշակումը՝
Էմմա Ճարտուրյանի խոսքը՝
Վահան Հարությունյանի

«Գավաթներով պար»

«Զանգեզուր»
Երգ՝ գուսան Աշոտի

«Տասնչորս»

Ույգուրական «Աղջիկը Կաշգարից», բեմադրությունը՝ Թամարա Խանումի

Կորեական «Տորադի»

Ռուսական «Դունյան կարը վարշից», բեմադրությունը՝ Ուստինովայի

Այրանական «Դելի ռուդն»

Բելոռուսական «Վեչորինկա».

Հնդկական «Երազ»

Չեխական «Չերեշնեչկի»

Ուզբեկական «Այ մայրիկ»

Վիետնամական «Քնարական երգ»

1957 թվական: Արև Բաղդասարյանը Խորհրդային Միության արտիստների պատվիրակության կազմում շրջագայության է մեկնում Վիետնամ, Բիրմա, Չինաստան: Հուզմունքը չափազանց մեծ էր. չէ՞ որ առաջին անգամ էր ելույթ ունենում արտասահմանյան հանդիսատեսի առջև:

Արևի ելույթը համերգային ծրագրի ամբողջ մի բաժին էր զբաղեցնում: Ելույթ էր ունենում իր սովորական խաղացանկով՝ ԽՍՀՄ և արտասահմանյան երկրների ժողովուրդների երգեր ու պարեր: Հանդիսատեսը մեծ հետաքրքրությամբ է հետևում նրա կատարողական արվեստին: Հանոյում և Ռանգունում Արևը ելույթ էր ունենում այդ երկրների մշակույթի նախարարությունների նվիրած վիետնամական և բիրմայական ազգային զգեստներով, ինչը առանձնահատուկ գրավչություն և գունեղություն էր հաղորդում նրա պարերին:

Արտիստուհու առանձնակի ծառայությունը պետք է համարվի այդ երկրների ժողովրդական երգերի և պարերի կատարումը, որոնք հենց տեղում սովորած, համաձայն մամուլի արձագանքների կատարվեցին պրոֆեսիոնալ բարձր մակարդակով: Իսկ «Տոկուոկ» («Հայրենիք») թերթը նշեց. «Վիետնամցիների հոգում երկար կպահպանվեն Արև Բաղդասարյանի երգերը»:

Ուշադրության է արժանի նաև այն փաստը, որ վիետնամական համարը Արևը պատրաստեց համերգից ընդամենը մեկ օր առաջ, և խստապահանջ վիետնամցի հանդիսատեսը զարմացած ու հիացած էր արտիստուհու տաղանդով, որ կարողացավ միանգամայն ճիշտ ու հավատիորեն հաղորդել իրեն անծանոթ ժողովրդի երգի ու պարի բնույթը և ազգային երանգավորումը:

Արև Բաղդասարյանը
Արամ Խաչատրյանի հետ (1958թ.)

1958 թվականին, Արև Բաղդասարյանի հերթական համերգից հետո, Արամ Խաչատրյանը նրան գրել է. *«Խիստ կարևոր եմ համարում գրել ձեզ այս նամակը: Ձեր ելույթը ինձ մեծ բավականություն պատճառեց, և ես ուզում եմ ասել ձեզ, որ Դուք տաղանդաշատ դերասանուհի եք: Ցանկանում եմ երջանկություն, առողջություն և նորանոր հաջողություններ Ձեր խիստ անհրաժեշտ, կարևոր արվեստում...»:*

Արև Բաղդասարյանը Մարտիրոս Սարյանի հետ (1958թ.)

Նույն թվականին նրա համերգների մշտական այցելուներից մեկը՝ Մարտիրոս Սարյանը, գրել է. *«Հարգելի Արև ջան, ցանկանում եմ քեզ, որպեսզի քո արևշատ արվեստով երկար տարիներ շարունակես հաճույք պատճառել մարդկանց»:*

Արև Բաղդասարյանը և Թամարա Խանումը, Տաշքենդ (1961թ.)

Հայկական ԽՍՀ ժողովրդական արտիստուհու բարձր կոչում ստանալու ուրախալի լուրը Արև Բաղդասարյանը ստանում է Տաշքենդում, 1961 թվականին, հյուրախաղերի ժամանակ: Ուրախությունն առավել մեծ եղավ, երբ առաջին շնորհավորողը եղավ Թամարա Խանումը, որը Արևի համար իր ընտրած ժանրում կատարողական վարպետության օրինակելի տիպար էր: Արտիստուհիները միասին կատարեցին հայկական «Ղազախի» պարը և լուսանկարվեցին ի հիշատակ այդ նշանավոր օրվա:

1962 թվական: Արև Բաղդասարյանը արդեն Եվրոպայում է: Նրան ծափահարում են Բելգիան և Լյուքսեմբուրգը: Ինչպես հայտնում է բավականին լայն հեղինակություն վայելող փարիզյան «Սուար» թերթը, հայոց լեզվի իմացության կարիք ամենևին չզգացվեց, քանզի «դերասանուհու առոգանությունը, շարժուձևը, դիմախաղը, ձեռքերն ու աչքերըն արդեն ամեն ինչ արտահայտում էին»:

Երբ 1963 թվականին, պատրաստվում էր հայ արվեստագետների մեկնումը Ֆրանսիա, Արև Բաղդասարյանի թեկնածությունը ոչ մեկի մոտ կասկած չէր առաջացնում:

Ահա թե ինչ էր գրում ֆրանսիական մամուլը նրա ելույթների մասին. «Արև Բաղդասարյանը իր հայկական ժողովրդական երգերով և պարերով հանդիսականի կողմից ընդունվեց հաղթական հաջողությամբ» («Լա Պրովանսալ»):

Այդ ժամանակից ի վեր մեր արվեստի տասնօրյակներն այլևս հնարավոր չէր պատկերացնել առանց Արև Բաղդասարյանի անսամբլի մասնակցության, հանդիսավոր երեկոները և տոնական հաերգները՝ առանց նրա եզրափակիչ ելույթների:

1964 թվականի դեկտեմբերին արվեստի առաջատար վարպետների խմբի հետ Ինդոնեզիա, Հնդկաստան, Պակիստան երեքամսյա հյուրախաղերի մեկնելիս Արև Բաղդասարյանն ասում էր. «Բառերով չեմ կարող արտահայտել, թե որքան օգտակար են ինձ համար ուղևորությունները այդ երկրներ: Վերջերս ես ներկա էի մեր երկիր ժամանած ինդոնեզական անսամբլի համերգին: Ես լսեցի այդ ժողովրդի զարմանալի մեղեդային երգերը: Եվ այժմ,մեկնելով այդ երկիր, ես ցանկացա տեղում սովորել նրանց երգերն ու պարերը, որոնք նույնպես խորապես մտան հոգուս մեջ և դրանք ներառել իմ համերգային ծրագրի մեջ»: Նա այնպիսի եռանդով սկսեց իրականացնել իր մտադրությունը, որ տառացիորեն մի քանի օրվա ընթացքում պատրաստեց «Աշխարհ ման եկա» պարերգը և ներկայացրեց Ինդոնեզիայի հանդիսատեսին: Այդ համարն այնքան էր հաջող ստացվել, որ Անկախության պալատում կայացած համերգի ժամանակ դահլիճում ներկա գտնվող Ինդոնեզիայի նախագահ Սուկարնոն, հիացած այդ հրաշալի կատարումով, բեմ է բարձրացել և ներկաների բուռն ծափահարությունների տակ սկսել է պարել արտիստուհու հետ:

Հնդկաստանում գտնվելու չորս շաբաթվա ընթացքում խորհրդային արտիստները ելույթ ունեցան այդ երկրի համարյա բոլոր խոշոր քաղաքներում՝ Դելիում, Մադրասում, Հայդարաբադում, Բոմբեյում, Ջայպուրում և այլուր: Եվ ամենուր նրան ընդունում էին միահամուռ և անկեղծ ցնծությամբ: Համերգները եզրափակում էր Արև Բաղդասարյանը: Հնդկաստանի մայրաքաղաքում նրա հաջողության մասին «Պետրիոտ» թերթը գրեց. «Համերգի ավարտին ժողովրդական արտիստուհի Արև Բաղդասարյանն այլոց թվում կատարեց հնդկական երգ, որին ձայնակցեց ամբողջ դահլիճը»:

Արև Բաղդասարյանի կատարողական վարպետությունը նշվեց նաև Մոլդովիայում, 1969 թվականին անցկացված հայ մշակույթի օրերին, երբ նա պարգևատրվեց այդ հանրապետության Գերագույն խորհրդի նախագահության պատվոգրով: Կիսելով համընդհանուր հիացմունքն Արևի արվեստի նկատմամբ, մոլդովացի մի խումբ գրողներ իբրև ընկերական կատակ նրան նվիրեցին հետևյալ փոքրիկ բանաստեղծությունը.

Ով կարողանա գրկել Արևին,
Կգրկի հարյուր աղջիկ գեղանի:
Այս զարմանալի հրաշք հայուհին
Մեկ րոպե չանցած դարձավ չինուհի,
Հետո՝ հույն աղջիկ, կամ օսեթուհի,
Կամ ռուս գեղուհի կամ էլ լեզգուհի,
Կամ թե ֆրանսուհի, կամ մոլդավուհի,
Բիրմացի աղջիկ, կամ թուխ հնդկուհի:
Մեկի մեջ հարյուր աղջիկ գեղադեմ,
Էլ ինչպե՞ս չասես՝ այցելիր, Արև...

Ինչևէ, մոլդովացի արվեստի սրամիտ կոլեգաներին հարկավոր չէր վախենալ չհասկացվելուց, քանի որ նրանք գուշակեցին, որ արտիստուհին մտերիմ է հումորին: Բաղդասարյանի ծրագրի երգերի և պարերի մեծ մասը լի է հումորով: Թեթևությունը և անսովոր նրբագեղությունը, որով արտիստուհին կատարում էր կենցաղային հումորային իր համարները, անմիջապես աչքի էին ընկնում: Եվ իրոք, Արև Բաղդասարյանի թե կյանքում, թե արվեստում իշխում էր հումորը: Անգամ սովորական զրույցներում նա լսողներին ստիպում էր ծիծաղել, հյութեղ պատմելով թվում է թե ամենահասարակ բաների մասին:

1972 թվականի վերջերին Հայաստանի արվեստագետների մի պատկառելի խումբ սփյուռքահայ կազմակերպությունների կողմից հրավերներ է ստանում այցելել Լիբանան և Սիրիա: Այդ այցին մասնակցած գրող Ալեքսանդր Արաքսմանյանը պատմում էր. «Նա հաշված վայրկյանների ընթացքում մտավ իր տարերքի մեջ և երգեց գուսան Աշոտի հայրենասիրական, խրոխտ երգերից մեկը: Բաղդասարյանն ունկնդիրներին իսկույն գրավեց, դարձրեց դաշնակից, իսկ երկրորդ պարերգից հետո՝ նաև երկրպագու: Եթե մինչ այդ, այնուամենայնիվ, մի պայմանական անջրպետում կար սրահի ու բեմահարթակի միջև, այն րոպեապես վերացավ: Բաղդասարյանը դուրս եկավ իրեն հատկացված տարածությունից, «խուժեց» սրահ, ստիպեց, որ բոլորը միանան իր ծափերին, բացականչություններով խրախուսեն: Նազանքը, անմիջականությունը, տեմպերամենտը ըմբռնվեցին, հասան սրտերին, ոգևորեցին: Ժպիտներ, աչքերի անսովոր փայլ: Մրրկուն ռիթմը վարակում էր նույնիսկ պատկառելի տղամարդկանց: «Զանգեզուրի գովքը» հնչեց հիմնի նման:

Վարձատրությունը միայն որոտընդոստ ծափահարությունները և կենացները չէին: Շատերը հեռացան սեղաններից, նետվեցին դեպի արտիստուհին՝ համբուրելու նրա ձեռքերը, շռայլելու ամենաշքեղ մակդիրները:

Այս երևույթը դարձավ մի տեսակ ռեկլամ, որից հետո Բեյրութում բոլորն անհամբեր սպասում էին Արևի ելույթին: Նրա հաջողությունը մեր շրջագայության ընթացքում մեծանում էր օրեցօր: Նա ունկնդիրներին հատկապես ապշեցնում էր արաբական երգերի դասական կատարումներով»:

«Արև Բաղդասարյանը համակ խանդավառություն է», - նշեց բեյրության թերթերից մեկը:

Պակիստանյան «Ջագմագ» («Ասպղեր, ասպղեր»)

Արաբական «Գեղեցիկ աղջիկ»

1975 թվականին կայացան Արև Բաղդասարյանի հյուրախաղերը Եգիպտոսի Արաբական Հանրապետությունում: Եվ վերստին աննախադեպ հաջողություն: Տեղի մամուլը նշում էր. «Համերգի ընթացքում հանդիսականների բազմահազարանոց լսարանը խլացուցիչ ծափերով էր ողջունում, նրան, որ մի քանի համար կատարեց միայն: Իսկ ինչ տեղի կունենար այն դեպքում, եթե նրա համերգը ներկայացվեր ամբողջությամբ, դժվար է երևակայել:

Կահիրեում Արև բաղդասարյանի ելույթների մասին «Արև» օրաթերթը 1975 թվականի մարտի 17 համարում գրել է. «Այս բոլոր երգերը, ինչպես ըսած էինք, ան կը կատարէ իր իսկ հեղինակած պարերով, իրեն յատուկ երգիծական շեշտով, տեղին համեմատ՝ կատակային շարժումներով ու, մանավանդ, երիտասարդական թռչկոտումներով, հակառակ որ քանի մը օր առաջ մէկ ոտքը դարձած ըլլալով, կը քալէ կաղալով: Իսկ Արևի ժպի՞տը... արևուն նման պայծառ, երբեք չի հալիր իր դէմքէն»:

Այս բոլոր ուղևորություններն արտացոլվեցին նրա խաղացանկում: Յուրաքանչյուր ուղևորությունից հետո նրա ծրագիրը հարստանում էր նոր համարներով, թարմություն հաղորդելով նրա արվեստին, հնարավորություն տալով նրա տաղանդին նորովի դրսևորվել: Ինչ երկիր էլ այցելեր, ամենուր նա հիացնում էր հանդիսատեսներին իր հմայքով, հոգեհմա հայկական երգով, հիանալի պարով՝ մերթ խրոխտ ու խանդավառ, բայց միշտ թովչանքով առլեցուն:

Բիրմայական «Շուեմի»

Իրանական «Գարեան հայեր»

Բելոռուսական «Սիրելի մայրիկ»

Հունական «Նինանայ յավրում»
(«Վերկաց պարենք իմ գեղեցկուհի»)

Տպավորիչ էր արգենտինացի կինոաստղ Լոլիտա Թորեսի ելույթը: Արև Բաղդասարյանը նրա հետ ծանոթացել էր արտասահմանում կայացած համերգներից մեկի ժամանակ և երկար տարիների ընթացքում պահպանում էր բարեկամական կապեր: Հայաստանում Լոլիտա Թորեսի հյուրախաղերը զուգադիպեցին Արև Բաղդասարյանի հոբելյանական արարողությանը, և Արգենտինայից ժամանած անվանի հյուրը սիրով ներկայացավ իր հայ ընկերուհու ստեղծագործական երեկոյին՝ անձամբ շնորհավորելու նրան: Այդ երեկո, ներկաների բուռն ծափողջույնների ուղեկցությամբ Լ. Թորեսը հոբելյարին նվիրեց իր երգերից մի քանի կատարումներ:

Արև Բաղդասարյանի հոբելյանական երեկոյին ելույթ է ունենում արգենտինացի կինոաստղ Լոլիտա Թորեսը (1987թ.)

«Հրաժեշտի երգը» երաժշտությունը՝ գուսան Մարտիրոսի խոսքը՝ Վահան Հարությունյանի

Հանդիսավոր երեկոն մոտենում է ավարտին: Հնչում է գուսան Մարտիրոսի «Հրաժեշտի երգը»: Բաղդասարյանը այդ երգը կատարում է մի հատուկ, առանձին վերելքով, զարմանալի դյուրինությամբ: Հետզհետե հանդիսականները միանում են նրա երգեցողությանը, դահլիճում ստեղծելով հանդիսավոր տրամադրություն:

Հայոց երգերից,
Հայոց պարերից
Փունջ եմ ես քաղել,
Բոլոր շեմերից,
Բոլոր բեմերից
Ձեզ եմ ես հղել...

Արև Բաղդասարյանն այս երգով էր ավարտում իր բոլոր համերգները: Նրա համար այն ոչ թե սովորական երգ էր, այլ արվեստի էությունն արտահայտող մի հիմն էր, մի պատվիրան:

Արևը հայ երգի քարոզչուհի էր, այո. սա ինքնին հասկանալի է: Սակայն այդ քարոզչությունն անում են նաև մյուս կատարողները: Արևը «երգեր էր տանում», բայց նաև «երգեր էր բերում տուն»: Բարձր գնահատության է արժանի ինտերնացիոնալիզմի ոգին: Մյուս ժողովուրդների պարեր ու երգեր սովորելը և դրանք յուրացնելը ոչ միայն արվեստի իրողություն է, այլև մերձեցում, բարեկամություն, փոխադարձ առնչություն այլ ժողովուրդների հոգևոր հարստության հետ:

1994 թ. փետրվարի 17 - ին, կյանքի 81 - րդ տարում կյանքից հեռացավ Արև Բաղդասարյանը: Նրա հիշատակին նվիրված հրաժեշտի խոսքում ասված էր. «Մայր մտավ արևը, մեր Արևը: Նա այլևս չի ծագի մեր երկրային կյանքի երգարվեստի հորիզոնում: Սակայն միթե անցողիկ է, միթե կարող է կորսվել գեղեցիկը, հմայքը, որն հայկական բեմ բերեց և հավերժացրեց Արև Բաղդասարյանը: Տարբեր ժողովուրդների երգերն ու պարերը Ղարաբաղի գեղեցկուհի դստեր կատարմամբ չեն կորչի: Նրանցում մենք դարձյալ կլսենք ժողովրդական ձայնը, ղարաբաղցու սրտի զարկերը, կտեսնենք Արևի արևային ժպիտը»:

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ, ՀԻՇԱՏԱԿ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ ԵՎ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄՆԵՐ ԱՐՏԻՍՏՈՒՀՈՒ ՄԱՍԻՆ

Իր ստեղծագործական ճանապարհին նրան բախտ վիճակվեց հանդիպելու և աշխատելու բազմաթիվ նշանավոր վարպետների հետ, ովքեր այս կամ այն չափով ազդեցին նրա արտիստական գործունեության վրա, բարերար ներգործություն ունեցան, աջակցեցին նրա վարպետության խորացմանը, ճաշակի կատարելագործմանը: Այդ կապերի մեծ մասը շարունակվել է երկար: Եվ դրա պատճառը ոչ միայն Բաղդասարյանի արվեստն էր, այլ նաև նրա մարդամոտ, հոգեխինդ և սիրալիր բնավորությունը:

Միայն անունների թվարկումն արդեն շատ բան է ասում. Թամարա Խանում, Արտեմի Այվազյան, Իրմա Յաունգեմ, Ավետիք Իսահակյան, Հրաչյա Ներսիսյան, Վալերիա Բարսովա, Արամ Խաչատրյան, Սուրեն Քոչարյան, Մարտիրոս Սարյան, Ալեքսանդր Հարությունյան, Առնո Բաբաջանյան, Թաքուլ Ալթունյան, Մահմուդ Էսեմբաև, Հայկանուշ Դանիելյան, Մայա Պլիսեցկայա, Վարդան Աճեմյան, Էմմա Ծատուրյան, Պարույր Սևակ, Կարո Հալաբյան, Հովհաննես Շիրազ, Վլադիլեն Բալյան, Իլյա Արբատովա, Էդվարդ Մանուկյան, Վլադիմիր Վարկովիցկի, Տատյանա Ուստինովա, Վահան Հարությունյան, Վանո Մուրադելի, Մեր Մկրտչյան, Ալեքսանդր Արաքսմանյան և շատ ուրիշներ:

Հետաքրքրական են նաև անկեղծ մակագրություններով լուսանկարները ի հիշատակ արտիստուհու հանդիպումների մարշալ Բաղրամյանի, գեներալներ Սաֆարյանի և Մուրադյանի, Բելոգորսկու և Դրագունսկու, Խորհրդային Միության կրկնակի հերոս Նելսոն Ստեփանյանի հետ, ինչպես նաև արտասահմանյան երկրների նշանավոր հասարակական ու պետական գործիչների հետ:

Մարշալ Բաղրամյանը Հայաստանի գիտության և մշակույթի գործիչների հետ

Արև Բաղդասարյանն իր համար վիետնամական պար բեմադրած պարուսույցի հետ (1957թ.)

Արև Բաղդասարյանը և Մահմուդ Էսեմբաևը

«Արև ջան, ցգտիր ծրագիրդ հարստացնել աշխարհի ժողովուրդների երգերով ու պարերով, դա քեզ դուրս կբերի լայն ասպարեզ»: Համերգի ավարտից հետո Հրաչյա Ներսիսյանը դարձյալ գնաց ետնաբեմ, գրկեց Արևին և հայրաբար ասաց. «Իմ մտքովն իսկ չէր անցնի, աղջիկս, որ ի միջի այլոց տրված իմ խորհուրդը դու այդպես փայլուն կերպով կիրականացնես: Ապրես: Նոր հաջողություններ եմ մաղթում քեզ»:

Հրաչյա Ներսիսյան

«Ամեն անգամ լսելով Արևին, իմ հոգու մեջ սկսում է ճախրել աղավնիների երամը: Մինչ այդ ինձ թվում էր, թե իմ հոգու մեջ այլևս չկան աղավնիներ: Նման ոգեշնչություն առաջին անգամ ինձ նվիրեց Հայկանուշ Դանիելյանը՝ հայոց սոխակը: Մենք առավել երջանիկ ենք երգ ու պարում, քան կյանքում»:

Ավետիք Իսահակյան

Պարույր Սևակն Արևին անվանեց *«անապառ լուսատու»*:

«Գովեք ու փառաբաշխեք իմ հոգևոր քրոջը՝ Արևին: Նա անմարելի ատրճ է երգարվեստի երկնակամարում: Ես սիրում եմ նրան և հպարտանում նրանով: Իսկ Դուք գիտեք, որ առանց փառաբաշխանքի նշանավորները թառամում են»:

Թամարա Խանում

«Իսկ ինչպիսի հիացմունքով ու ոգևորությամբ են լսում ու դիտում Արև Բաղդասարյանի երգի ու պարի միատեղ շնորհալի կատարումը և անվերջ ծափահարություններով կրկնել տալիս այն»:

Գուրգեն Ջանիբեկյան

«Նա հաջողությամբ կարողանում էր համատեղել երգը, պարը և բեմական խաղը: Նրա կատարողական արվեստում հանդիսատեսին կաշառում են գույների հարստու-թյունն ու պայծառությունը, արտահայտամիջոցների բազմազանությունը, կատարման խանդավառությունը ու թարմությունը: Բեմահարթակին հայտնվելով հենց առաջին իսկ պահին արտիստուհին նվաճում է հանդիսատեսի ուշադրությունը: Եվ հանդիսատեսը հետաքրքրությամբ հետևում է, թե ինչպես Արև Բաղդասարյանը, օգտագործելով արտիստական հնարքները, կարողանում է բացել ժողովրդական երգի, պարի բովանդակությունը»:

Կարեն Քալանթարյան
արվեստաբան

«Ձեր տաղանդը, Ձեր վարպետությունը, Արև Գրիգորևնա, Ձեր անշնուրաց սերը ժողովրդական ստեղծագործության գոհարների հանդեպ ինձ առանձնապես հուզում են մինչև հոգուս խորքը: Դուք հմտորեն դերակատարում եք ժողովրդականից ամենահիասքանչը՝ երգերն ու պարերը, որոնցից հավաքում եք ծիածանափթիթ մի ծաղկեփունջ, որը խնդություն է պատճառում ամեն մեկին... Ինձ՝ Ձեր անկեղծ բարեկամին, մի քիչ էլ ուսուցչին, միշտ ուրախացնում էր Ձեզ հետ աշխատելը, ուրախացնում էին ժողովրդական ստեղծագործության մեջ խորանալու Ձեր ջանքերը, ուրախացնում էին Ձեր հայտնագործությունները և այն, որ Դուք երբեք չէիք հանգստանում չեռք բերածով»:

Իրմա Յաունգեմ

Նեպալի թագավորի և նրա կնոջ հետ (1963թ.)

«Դիտելով Արև Բաղդասարյանի մենահամերգները, դժվար չէր կռահել, որ Հայաստանի երաժշտական հորիզոնում ծագել էր շնորհաշող նոր աստղ: Հմայում և հիացնում էր աննախադեպ այն ընդունելությունը, որին նա արժանանում էր ամենուրեք՝ քաղաքներում, ավաններում, գյուղերում: Նրան ծափահարում էին բոլոր դասերն ու իսավերը, հավասարապես ընդունում էին և բանվորները ու գյուղացիները, և մտավորականները: Արտակարգ բարդ էր նրա կատարողական վարպետությունը, որը նա հրամցնում էր անսահման արտիստիզմով և հմայքով: Արևն ուներ անբասիր ճաշակ, գեղագետի, երաժշտի, արտիստի ճաշակ:

Երբ ինձ առաջարկեցին նրա համար ծրագիր պատրաստել, ես արդեն Հայաստանի պետական երգչախմբի գլխավոր ղեկավարն էի: Առաջարկությունն ընդունեցի առանց տատանվելու, թեև այդ բանի համար քիչ ժամանակ էր առանձնացվում: Իմ աշխատանքը թեթևացրին Արև Բաղդասարյանի բացառիկ կարգապահությունը, նրա ոգևորությունը, նվիրվածությունը և, իհարկե, մեծ երաժշտականությունն ու սերը կատարողական արվեստի հանդեպ»:

Էմմա Ծատուրյան

«Իր արվեստի հանդեպ լինելով խստապահանջ՝ նա քրտնաջան և պատասխանատվության մեծ զգացմունքով էր աշխատում յուրաքանչյուր համարի վրա, հղկելով ու ստուգելով ամեն մի շարժուձևը, պարի կառուցվածքը, երգեցողության առոգանությունը, քանի որ երգի ու պարի համաչափվածք հանդիսացող այս ժանրը դժվարագույններից մեկն էր և հենց այդպիսին էլ ճանաչված է:

Ամեն ինչից զատ, այստեղից շատ հեշտ էր ընկնել կաղապարի մեջ, դառնալ նմանակող, եթե նկատի ունենանք, որ Արևից շատ վաղ իր արվեստով հռչակվել էր նշանավոր Թամարա Խանումը, որը այս ժանրի առաջնակ հիմնադիրներից էր: Արև Բաղդասարյանը բարեբախտաբար խուսափեց նմանակելու այդ վտանգից, ստեղծելով իր, միմիայն իրեն հատուկ ոճ ու ձև այդ հիրավի դժվարին ժանրում: Սակայն այդ ամենը հեշտ չէր տրվում, միայն համառ աշխատանքի գնով, իսկական նվիրվածության և ներշնչանքի միջոցով ձեռք բերվեց հաջողությունը:

Բեմի վրա Արևը կերպարանափոխվում էր՝ պայմանավորված պարի ու երգի բնույթով: Հանդիսատեսի աչքի առջև հերթով անցնում էին կերպարներ, որոնք ստեղծում էր Արև Բաղդասարյանը:

Նա մինչև վերջ հավատարիմ մնաց իր արվեստին, և նրանք, որոնց բախտ վիճակվեց ներկա լինելու նրա համերգներին, եղան հիրավի անխոնջ և գերող Արև Բաղդասարյանի բնատուր վարպետության վկաներ»:

Ալեքսանդր Հարությունյան
կոմպոզիտոր, ժողովրդական արտիստ

Արև Բաղդասարյանը և վավերագրական ֆիլմերի կինոռեժիսոր Արշա Ավանեսովան (1954թ.)

Արշա Ավանեսովան Արևի մասին ֆիլմ էր պատրաստել, սակայն 50 - ականների վերջին նրան խոցեց ծանր հոգեկան հիվանդություն և տաղանդավոր կինը մոտ 30 տարի անցկացրեց հոգեբուժարանում:

Արև Բաղդասարյանը և պարուսույց Էդուարդ Մանուկյանը

«Արևի համար երգեր սկսել եմ գրել 40 - ական թվականների վերջերին: Եվ գրում էի ոչ միայն այն առումով, որ մենք բարեկամներ էինք, որ ես նրա արվեստի ջերմ երկրպագուն էի, արվեստ, որ լի էր եռանդով ու կորովով, որ վերին աստիճանի անմիջական էր ու տպավորիչ, լեցուն հողի անուշ բույրով: Ոչ միայն: Գրում էի, որովհետև Արևի արվեստը, որտեղ խոսքին տրվում էր մեծ տեղ, միշտ համահունչ էր իմ մտորումներին՝ ստեղծել ձևով և բովանդակությամբ ինքնատիպ սյուժետային երգեր: Այդ պատճառով ես մեծ բավականությամբ էի գրում Արևի համար, և տեսնելով և լսելով նրա կատարումները, նորից ու նորից համոզվում էի ընտրած սկզբունքի ճշմարտացիության մեջ»:

Վահան Հարությունյան
արվեստաբան

«Արև Բաղդասարյանի արվեստը նախ և առաջ դերասանական արվեստ է, նրա արածի մեջ ճնշող տեղ է գրավում թատրոնը, թեպետ համարները բնավ թատերայնացված չեն: Թատրոնը օրգանապես առկա է նրա կատարումներում: Մեկ երեկոյի ընթացքում խաղալ տարբեր, միմյանց հակադիր 10 -15 դեր, նշանակում է իսկապես պետք է տիրապետել դրամատիկական արվեստի բնատուր զգացողության: Վերանում են երգի ու պարի պայմանականությունները և հաստատվում է կենսազգացողության հիմնավորվածությունը իր ողջ անկեղծությամբ...

Ինձ միշտ հետաքրքրել է այն միտքը, որ Արև Բաղդասարյանին ուզածդ ժամանակ, հենց այնպես, առանց որևէ նախապատրաստման, կարելի է տեղափոխել դրամատիկական թատրոն, և այնտեղ նա կդառնա բնահատուկ դերերի անզուգական կատարող, կիսաղա կոմիկա - բնահատուկային բնավորություններ»:

Ալեքսանդր Արաքսմանյան

«Ինչպիսի երգող ձեռքեր, ինչպիսի կրակոտ աչքեր, տաք նայվածք: Բեմ է ներխուժում ինչպես բոց, իսկ հեռանում է որպես հեգնություն: Այնպիսի տպավորություն է, որ բեմական փառքն է երկար ժամանակ որոնել Արևին, և հենց այսօր նրանք գտան և գրկեցին միմյանց»:

Մայա Պլիսեցկայա

Համերգից հետո հնդիկ կոլեգաների հետ. Դելլի (1964թ.)

Հանոյի բաղաքապետ Տրայ Զոյ Հունգը համերգից հետո շնորհավորում է Արև Բաղդասարյանին (1957թ.)

«Շատ էական է և այն, որ ինչ համար էլ կատարի արտիստուհին, նա հանդես է գալիս ոչ միայն իբրև շնորհալի պարուհի, ոչ միայն իբրև երգչուհի իր յուրօրինակ ձայներանգով, այլ նախ և առաջ իբրև դերասանուհի: Նա իսկապես խաղում է, ձգտելով մի պարագայում ստեղծել պարերգային կերպար, բավականին հմտորեն բացահայտելով պարի ու երգի բատերական տարրերը»:

(«Կոմունիստ», 20 հուլիսի, 1961թ.)

«Եթե վերացարկվենք երաժշտությունից, ապա կտեսնենք, որ մեկ համերգի շրջանակներում արտիստուհին վերակերտում է բազմաթիվ բատերական կերպարներ, որոնցից մեկը խաղաղության մարտիկ է, երկրորդը՝ մերժված սիրահար, երրորդը՝ ամոթխած գեղջկուհի, չորրորդը՝ բամբասող հարևանուհի, խնամախոս»:

(«Սովետական Ղարաբաղ», 26 սեպտեմբերի, 1964թ.)

«Ու թող տարօրինակ չթվա այն հանգամանքը, որ հանրապետության ժողովրդական արտիստուհի Արև Բաղդասարյանի արվեստը դասենք դերասանական արվեստի շարքը: Արտաքուստ կարծես, թե դա այդպես չէ: Բայց միայն արտաքուստ: Արև Բաղդասարյանը դերասանուհի է բառիս լայն իմաստով, և լավ դերասանուհի: Այդ բանն ասելու իրավունքը մեզ տալիս է արտիստուհու էությունը և, որ կարևորն է, օժտվածությունը որպես այդպիսին, խոսուն և արտահայտիչ դիմախաղ, ասելիքն իմաստավորելու ունակություն, կատարողական վարպետություն: Բարեմասնություններ, որոնք Արևին հնարավորություն են տալիս առաջին իսկ մուտքից գրավել հանդիսատեսին և երկու ժամ անընդհատ նրան պահել իր ուշադրության ոլորտում:

Արև Բաղդասարյանի բարեմասնությունները, սակայն, վերոհիշյալով չեն սահմանափակվում: Նա կարող է մի քանի րոպեների ընթացքում վերապրել բազմապիսի պահեր. վիշտ՝ կորցրած սիրո էակի համար, հրճվանք, որ ունենում է յուրաքանչյուր ոք, երբ սիրված է փոխադարձաբար, իսկ մի փոքր հետո նա հիացմունք է պատճառում հումորի նուրբ զգացմունքով, որը գալիս է լրացնելու Արևի կրակոտ էությունը: Բայց այդ ամենը կկորցներ իր ուժը, եթե չլիներ այն գերագույն հատկանիշը, որ կոչվում է հմայք: Երջանիկ է այն արվեստագետը, որի օժտվածությունը ամփոփված է հմայքով: Արևը պատկանում է այդ երջանիկների թվին»:

(«Շիրակ», 5 դեկտեմբերի, 1968թ.)

«Իր կատարածը երգի ու պարի բեմական պատկերներն են, յուրաքանչյուրն ինքնատիպ իր բնույթով և ազգային յուրօրինակությամբ: Ազգային ինքնատիպությունն առաջին հերթին ընկալելի է դառնում կերպարների միջոցով. բեմի վրա մերթ հեզանազ հայուհի է, մերթ թիաչ հնդկուհի, մանրաքայլ վիետնամուհի, կրակոտ գնչուհի, բախծահայաց պարսկուհի...

Դա միայն պար չէ, այլև ներկայացում: Ազգային պարերգի, մնջախաղային արվեստի, ինքնաարտահայտման այլ միջոցների օգնությամբ մեկ երեկոյի ընթացքում նմանօրինակ 10 - 15 փոքրիկ ներկայացումների ենք ականատես լինում: Ձեռքի մի խոսուն շարժում, պարանոցի դարձում, մի քանի ժեստ գծերով պատկերվում է կերպարը, որը չես շփոթի ուրիշ ոչ մեկի հետ: Արտիստուհու դիտողականությունը հասնում է անվիճելի վարպետության»:

(«Հայաստանի աշխատավորուհի» ամսագիր, օգոստոս, 1987թ.)

«Իսկ նրա դիմախաղը, ըստ յուրաքանչյուր կատարվող երգի հարուստ բովանդակության: Եթե նույնիսկ մյուս շնորքներն անգամ անտեսենք՝ ապա արտիստական խառնվածքով դերասանուհին կմնա իր արտիստական բարձրության վրա»:

(«Արվեստ» ամսագիր, հունիս, 1994թ.)

Արև Բաղդասարյանը դստեր՝ Ռիմայի հետ (1973թ.)

Սուրեն Քոչարյանը և Արև Բաղդասարյանը որդու՝ Կարենի հետ (1978թ.)

Արտիստուհու թոռը՝ հենամյա Նարեկ Ավագյանը Արև Բաղդասարյանի 85 - ամյակին նվիրված երեկոյում ելույթ ունենալուց հետո ԱՕԿՍ (1998թ.)

Նարեկը դեռևս շատ փոքր էր, երբ Արև Բաղդասարյանը փորձում էր նրան սովորեցնել հայկական երգեր ու պարեր: Իսկ երբ նա մի քիչ մեծացավ, որոշեց իրեն նվիրել արվեստին, ինչպես տաղանդաշատ տատիկը. սկզբից երգեց Երևանի կոնսերվատորիայի կից տղաների «Վարդանանք» երգչախմբում, իսկ հետո 8 տարի սովորեց Սայաթ Նովայի անվան երաժշտական դպրոցի ֆլեյտայի դասարանում Գ. Հովհաննիսյանի մոտ: ԱՕԿՍ - ում կայացած երեկոյի ժամանակ նա մենակատարեց երգչախմբի հետ, իսկ հետո մանկան կրակոտությամբ նվագեց «Ուզունդարա» պարերգը, որը վերելքներ էր բերել բարձրացրել էր իր հանրաճանաչ տատիկին: Կանցնի երեք տարի և Նարեկը կդառնա Վ. Սպիվակովի միջազգային բարեգործական հիմնադրամի կրթաթոշակակիր:

ՎԵՐՋԱԲԱՆ

Ես ցանկանում եմ ասել Ղարաբաղի միշտ երիտասարդ, լեգենդար Արև Բաղդասարյանի չհնացող տաղանդի մասին:

Արև Բաղդասարյանին առաջին անգամ նկատեցին Բաքվում, նրա անդրանիկ բեմելը կայացավ ադրբեջանական բեմում: Սակայն երկար չտևեց նրա առաջընթացն օտար բեմահարթակի վրա: Արևի խելացի և հեռատես տաղանդը հուշեց, որ միայն Հայաստանն է իր հոգևոր պարարտ հողը, միայն այդտեղ կարող է նա երգով ու պարով մեծարել, հավերժացնել հայրենիքի կերպարը: Եվ նրա տաղանդը չսխալվեց:

Շուտով հայ արվեստի այլ ներկայացուցիչների հետ Արև Բաղդասարյանը տեղափոխվեց Հայաստան:

Ես հաճախ եմ եղել Արև Բաղդասարյանի համերգներին: Ուրախություն, խնդություն, բարի ժպիտ, սիրո շողով պարուրված աչքեր... Այս ամենի մեջ կար ոչ թե շինծու, այլ ճշմարիտ լավատեսություն: Հենց սրանով է բացատրվում «Նախշուն բաջի», «Խնամախոսներ», «Ղարաբաղի հայ տղա», «Տասնչորս», «Մարգարիտի նշանդրեքը», «Իմ Խաչիկը, Խաչատուրը», «Իմ յարը մին դանա յա» և մյուս երգերի փայլուն հաջողությունը: Թվում է, թե դրանք բոլորն էլ գրված են հատկապես Արև Բաղդասարյանի համար, թեև դրանք երգում են նաև ուրիշ կատարողներ:

Բառերը, ինչպես հայտնի է, բառարաններում ունեն կոնկրետ նշանակություն, իսկ բանավոր խոսքի մեջ հանդիսանում են կրողները ոչ միայն իմաստի, այլ նաև մարդու զգացմունքների ու ակնկալիքների: Արև Բաղդասարյանի երգերի բառերը համակված են ոգեղենությամբ, նրանք տանում են դեպի գեղեցիկը՝ լուսավորված սիրով ու երազանքով: Երգերը նրա կատարմամբ դառնում էին մարդկային ճակատագրերի մարմնավորում՝ մերթ ուրախալի, մերթ թախծալի: Պետք է հատկապես նշել, որ Արև Բաղդասարյանը կարողանում էր երգով ու պարով ստեղծել պայծառ կերպարներ, լիարյուն բնավորություններ: Թող վիրավորական չհնչի նրա կատարած երգերի հեղինակների համար, եթե ասեմ, որ երբեմն այդ երգերն առավել կենդանի ու գեղեցիկ էին, քան բուն տեքստում:

Չեմ հիշում ով է ասել, թե բոլոր նշանավոր կանայք իրենց հոգևոր կյանքն սկսել են թախիծով: Գուցե այս պնդման մեջ ճշմարտության հատիկ լինի: Սակայն ինչ վերաբերվում է Արև Բաղդասարյանին, ապա նրա կյանքն անցնում էր լուսավոր խինդով, ուրախ ու բարի ժպիտով: Իր ներաշխարհին խորթ էր վիատության ու մռայլության ոգին. սա նույնպես նրա բազմակողմանի տաղանդի, նրա աշխարհընկալմանը բնորոշ առանձնահատկությունն է: Եվ բերկրալի աշխարհընկալման հոգեկան այս վիճակը Արև Բաղդասարյանը կարող էր փոխանցել իր հանդիսատեսին:

Թեպետ ես վաղուց և երկար ժամանակ ճանաչում էի Արև Բաղդասարյանին, սակայն այսօր էլ չեմ կարող ասել, թե ում է նա նման: Միայն մեկ համեմատություն անվիճելի է. նա նման էր Ղարաբաղին, և ուր էլ գնար, իր հետ միշտ տանում էր Հայաստանի ու Ղարաբաղի անուշ պատկերները, ամենուր և ամեն ինչում մնում էր հայուհի:

Արևն ուներ եզակի և նուրբ լսողություն, աշխարհը սրտով ու հոգով ընկալելու ունակություն: Նա կարողանում էր յուրացնել ուրիշ ժողովուրդների երգերը և նոր գույներով հարստացած, վերադարձնել ունկնդիրներին: Իսկապես հազվադեպ ձիրք:

Արև Բաղդասարյանի ողջության ժամանակ ինձ, չգիտեմ ինչու, թվում էր, որ նա երկու կյանքով էր ապրում՝ տան և բեմական: Նրա վախճանից հետո հասկացա, նա ամբողջովին, առողջ հոգով և ամբողջ սրտով պատկանում էր արվեստին: Այսպես է գալիս, ո՛չ, այսպես է նվաճվում ԱՆՄԱՀՈՒԹՅՈՒՆԸ:

Վազգեն Մնացականյան
գրաքննադատ

Карен Авакян
“Так восходило солнце...”

Կարեն Ավագյան
«Այսպես էր ծագում արևը...»

Խմբագիր *Իրինա Մարգարյան*
Շարվածքը *Արեգ Ավագյան*
Սրբագրիչ *Սրա Վանեցյան*
Լուսանկարները *Սամվել Խանդիկյան*
Չափավորումը *Վահրամ Հարությունյան*
Համակարգչային չափավորումը *Վիկտոր Դիշչեգենյան*